

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-6

ՅՈՒՆՈՒԱՐ-ՅՈՒՆԻՍ

ԿԸ. ՏԱՐԻ 1954


ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԱՐՍՈՆԻ

ԿԵԱՆՔՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

1153/4-1198

ԻՐ ԺՆՈՒՆԳԻ 800 ԵՐՈՐԳ ՏԱՐԵԳ ԱՐԶԻՆ ԱՌԻԹՈՎ



HAROUTUNE HAZARIAN

«Որոյ գերակատար առաքինութիւնն եւ առատարուի իմաստութիւնն արժանի է արդեօք, զի մեծանշակիսցի մշտնջենաւոր գովասանութեամբ մինչեւ ի ծագս աշխարհի»:

C. Galanus

Հայ մշակոյթի պատմութեան մէջ ակա-
նաւոր դէմք մըն է Ներսէս Լամբրոնացի,
աննման մը իրեն նմաններու մէջ. թէ՛ իր
ծագումով, որ իշխանական տունէ կ'իջնար,
ազգական պահպանումի կարողիկաններու եւ
Ռուբինեան իշխանագուններու, թէ՛ աստի-
նանով, որ Տարսնի եւ Լամբրոնի թեմերուն
արքեպիսկոպոսն էր. եւ թէ իր քանարաշատ
հաննարովն, որ բազմաթիւն էր եւ ստեղ-
ծագործ, վաղահաս մտնով, արդէն 23 տա-
րեկան հասակին լուրջ աշխատանքի լծում
եւ իր կարեօրեայ կեանքին մէջ գրական հա-
րուստ եւ ծանրակշիւ վաստակներով պայծա-
րացած, յոյն եւ լատին գրականութենէ մե-
ծաթիւ քարգմանութիւններով արդիւնաւոր
հանդիսացած. իր հոետորական ատենաբա-
նութիւնները, որոնք մինչեւ մեր օրերը պա-
հած են իրենց կորովը, սոսիակէ եւ օտար-
աշխարհիկէ գնահատում ծանրագին: Իր
բազմահմտութիւնը իմաստասիրական, աս-
տուածաբանական, սուրբգրեանական եւ այլ
մարգերու մէջ վկայուեցաւ օտարներէ ան-
մըրցելի: Իր բարեկրօնգումները եկեղեցւոյ
եղծեալ, յարաբերալ կարգերը ամենապա-
տիկ բարեգարդեցին: Իր կենցաղագէտ եւ
խոհեմ քաղաքավարութեամբ ձեռնտու եղաւ
հայ իշխանական դարպասին եւ իբրեւ դես-

պան ուղարկուեցաւ կայսերական արքու-
նիքներ:

Դարը, որ ծնունդ տուած էր այս մեծ
մտքին, ընդունակ չէր եղած քանչեւաւոր
անոր Հաննարը: Մինչ Արեւելք եւ Արեւ-
մուտք կը հիանային անոր համբաւով, Քա-
ղաքին ընդունելի չէր երեւցած Մարգարէն:
Երբ հրապարակը կ'աղմկէր, գործաւոր մե-
ղուն իր փեթակը առանձնացած, ի լուրքեան
մեղր կը գործէր, կը շահագործէր քան-
քարը, որ շնորհուած էր իրեն: «Ձտաղանդս,
գոր ունիմ առ իս, գանգատով կը գրէր
Լեւոն Բ.ին, ծրարեալ կայ եւ քաղուցեալ»:
Իր մահէն ետքը, «Մանուկին» ստեղծագոր-
ծութիւնները, որոնք կենդանութեան ասո-
րագնահատում էին, հանդիմով ընդգրկեց
Եկող սերունդը, բարձր գնահատեց անոնց
արժէքը, հոգ տարաւ բազմացնել անոնց օրի-
նակները, երկասիրութիւնները հոգեկիր,
հոգեշունչ տիեզերական վարդապետի:

Իր մտերիմ աշակերտները նախահոգ
եղան կենսագրութիւններով եւ ներքողեան-
ներով անմահացնել անոր յիշատակը:

Բայց չեղաւ եօթը դարերու մէջ մէկը,
որ մանր բնութեամբ կազմէր Մեծ վարդա-
պետիս կենսագրութիւնն եւ գրական գոր-
ծունէութեան պատկերը: Փորձ մը այսպիսի
ձեռնարկութեան պիտի ներկայացնեն Ու-
սումնաբերքիս 1-6 միացեալ թիւերը հան-
դերձ պահպանումի-օշիմեան տոնագրու-
թեամբ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ



836-73